ԿԱՐԻՆԵ ԱՎԵՏՅԱՆ

ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՅԱՆ
(1850–1923. կենսագործունեության համառոտ ակնարկ)

1850 թ. սեպտեմբերի 30ին ծնվել է Կեսարիայի Թալաս գյուղում[1]: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Վարդ–Պատրիկյան դպրոցում, ապա՝ Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանում՝ ուշադրություն դարձնելով թվաբանական գիտելիքներին, որից հետո ութ տարի աշխատել է մեծահարուստ Պալիոզյան եղբայրների բամբակի գործարանում: Այդ ընթացքում իր և գործատերերի միջև ծագած տարաձայնության պատճառով անակնկալ որոշել է դառնալ հոգևորական[2] և, առանց ծնողների գիտության, մեկնել Երուսաղեմ:

1879 թ. Երուսաղեմի միաբան էր, 1881–ին ձեռնադրվել է վարդապետ, մինչև 1887 թ. հմտությամբ վարել է ավագ թարգմանչի[3], հաշվապահի, ապարանի և գրադարանի տեսչի պատասխանատու պաշտոնները: Երուսաղեմի նրա գործունեության մանրամասներ չգիտենք, սակայն 1910 թվականին, երբ միաբանությունը պառակտված էր, իսկ նրա տնտեսությունը՝ քայքայված ու պարտքերի մեջ խրված, երբ զգացվում էր բանիմաց տ տեղյակ մեկի կարիքը, իրավիճակը շտկելու, ինչ որ ձևով կարգի բերելու և վանական տնտեսությունը ճգնաժամից հանելու համար Պոլսի պատրիարքի խնդրանքով Տրդատ եպիսկոպոսը մեկնեց Երուսաղեմ:

1887–1910 թթ. եղել է Կեսարիայի առաջնորդ[4], 1899 թ. ձեռնադրվել է եպիսկոպոս: Տ. Պալյանի և էլի երեք եպիսկոպոսացուների Պոլսից Էջմիածին ուղևորության, ձեռնադրության և վերադարձի մանրամասների շարքում նկարագրված է նաև այս հետաքրքիր միջադեպը. «Մ. Էջմիածնէ վերադարձին Երևանէ Դիլիճան գացած միջոցին, կառքը շրջեր և երեք եպիսկոպոսները վար ինկեր, բայց անվտանգ ազատեր են: Դ. (իմա՝ չորրորդ — Կ. Ա.) եպիսկոպոսը, այսինքն՝ Կեսարացին, ուրիշ կսաքի մէջ է եղեր. և բան չէ եղեր: Զարմանալի է այս Կեսարացիին բախտաւորութիւնը: Աստուած անվարձ պահէ: Տվղիսի մէջ Տ. Գիւտ [Աղանեա՞ն] պատուական քահանան իր տան մէջ ճաշ տուեր է և մեծարեր է նորապ-

սակ եպիսկոպոսները: Ճաշէն յետոյ Տ. Գիւտ հօր 12 տարեկան որդին եպիսկոպոսներուն լուսանկարն հաներ է «ջոկ–ջոկ» («Քիւզանդիոն», 1899, հմր 815 (Յունիս 22), էջ 3՝ «Ազգային քրոնիկ») :

Ընտրվելու առաջին իսկ օրից նրա գործունեությունը եղել է բազմաբնույթ. նորընտիր առաջնորդը ժառանգել էր քայքայված վանական տնտեսություն, պառակտված ու անմիաբան, վարկաբեկված միաբանություն: Սակայն երիտասարդ և կորովի Պալյանը, որ իր մարդկային արժանիքների, բարոյական կերպարի, և ընդհանրապես իր գործունեության համար ժամանակակիցներից ստացել է «բարեջան, օրինակելի, անշահախնդիր, համեստ, անբասիր» բնորոշումները, գործում էր առանց հուսահատվելու. դիմեց Պոլսում և արտասահմանում գտնվող կեսարացի հայրենակիցներին. «Ամէն թղթատարի յանձնելիք նամակներ ունէր և կ'ըսէր. «Ես միայն թղթատարին քառասուն փարա (արծաթ դրամ) պիտի տամ. – հարիւր նամակը կընէ հարիւր դուրուշ: Եթէ անոնցմէ մէկը արդիւնաբերի, ես իմ նպատակիս հասած կըլլամ արդէն» [5]:

Եվ նպատակին հասնում էր. կեսարացիների նյութական և բարոյական աջակցությամբ և իր ջանքերով 1888 թ. մայիսին բացվեց Ս. Կարապետի վարժարանը, որի տնօրենը, բնականաբար, ինքն էր, և որ այնուհետև միշտ կապված էր իր անվան հետ: Վարժարանը, որ մինչ այդ կիսաքանդ շինություն էր, նորոգեց, բարեկարգեց, ստեղծելով գիշերօթիկի պայմաններ, հրատարակեց նրա ծրագիրը[6]:

Տրդատ եպիսկոպոսն այն հոգևորականներից էր, որ իր գործունեության մեջ մեծագույն նշանակություն էր տալիս կրթական գործին, գուրգուրում դպրոցի հաջողությունների վրա, ուսուցիչներին պատվիրում էր. «Նեղ և ճախող օրերու մէջ պէտք է արի՛ ըլլաք, ինչ որ ալ ըլլան հարկեցուցիչ պարագաները, և չգոցել երբեք վարժարանը: Օր մը, ժամ մը միայն գոցուելով, վերաբացումի հաւանականութիւնը կը նուազի: Միշտ բաց պահեցէ՛ք զայն: Եթէ աշակերտ մը իսկ չմնայ, ճենէ մին՝ ուսուցիչ, իսկ միւսը աշակերտ թո՛ղ ըլլայ, և անցնողը վարժարանի դուռը թող բաց տեսնէ, և ներսէն դասաւանդութեան ձայն թո՛ղ լսուի: Յաջող օրեր չեն ուշանար» [7]:

Ինը տարի անց, 1897 թվականի մայիսին Ս. Կարապետի վանքի վարժարանին կից հիմնում է Որբանոց–կրթարան, ի հակակշիռ նույն թվականին Թալասում բողոքականների բացած որբանոցի՝, որի անօրենը թրքախոս հույն էր: Այս հաստատությունում ծնողազուրկ երեխաները կրթություն էին ստանում վարժարանի ծրագրով, «բայց ասոնց աւելի գործնական օգուտ մը ընելու և ներկային հետ նոցա ապագայն ևս ապահովելու համար, որոշեցի նաև ուսուցանել տալ այլ և այլ արհեստներ» (գորգագործություն, կոշկակարություն, կահագործություն) [9] : Շատ շուտով Պալյանի 8–13 տարեկան որբ–սաների քանակը արագորեն ա-

ճելով. քսանյոթից հասավ երեսունութի, իսկ այնուհետև՝ քստասունհինգ–հիսունի, քանի որ Թալասի բողոքականների որբանոցից դժգոհ երեխաները փախչում և դիմում էին առաջնորդին, որպեսզի իրենց ընդունի, և հակառակ դժվարություններին, ընդունվում էին. «Յիրաւի, Կեսարիոյ ազգայնոց արդի տնտեսական աագնապալի վիճակն ի նկատի ունելով, չըսեմ անկարելի, բայց շատ դժուարին և յանդուգն էր ներկայ պարագայի մէջ այսպիսի գործի մը ձեռնարկել, մինչ զուրկ ենք ո՛ և է նյութական միջոցէ. բայց միայն Աստուծոյ անքաւ գթութեան ապաւինելով և սիրելի ազգայնոց մարդասիրական զգացմանց վստահելով և ի սէր որբոց, լի յուսով և հաւատով, սկսանք այս գործին: Վարժարանս... հրապարակաւ կ՚յայտնեմ և կ՚կրկնեմ թէ պիտի պահէ նաև քառասուն հինգ որբեր, և կ՚խնդրեմ մեր տոհմասէր և որբասէր ազգայիններէն, որ ուր ուրեք և աշխարհիս ո՛ր կողմն ալ գտնուին հայ բարեպաշտներ, կրնան նպաստել, և նաև այս որբերուն հայր, մայր և պաշտպան գրուիլ: Ամէն տեսակ նպաստ ու նուէր, վաքր ու մեծ, ամենայն շնորհակալութեամբ կ՚ընդունուի» [10]: Շրջաբերականն ավարտում է որբ–սաներին հովանավորելու, որդեգրելու կոչով՝ միաժամանակ ներկայացնելով որդեգրման պայմանները ու յուրաքանչյուր սանի համար անհրաժեշտ դրամական ծախսերը՝ իր ամենահամեստ հաշվարկով տարեկան վեց ոսկի (լիրա) : Առ այս տեղեկագիր–հաշվետվություն է ուղարկել Պատրիարքարան, որին ի պատասխան ստացել է պատրիարքի քաջալերանքը և հանձնարարականը՝ «...որ օտար վարժարանաց մէջ գտնուող հայ աղոց համար ալ հոգ տանի, հայրենի կրօնքն ու մայրենի լեզուն չկորսնցնելու համար» և «...յիսուն լիրայի չէք մը յոնց առ բարեջան առաջնորդ–վանահայրն» [11]:

Որբանոցի բացումից առաջ Տ. Պալյանը գրել է. «Ասկէ իբր երեք ամիս յսասաջ արդի կացութիւնը քաղցր պարտականութիւն մ՚ալ կատարելու գաղափարն ազդեց մեզ. այսինքն՝ որբեր խնամել... և այդ գաղափարն ի գործ դնելու համար ամէնէն յարմար թուեցաւ ինձ յիշեալ վարժարանիս կցել նաև Որբանոց–Կրթարան մը» («Քիւզանդիոն», 1897, հմր 221, էջ 1) : Կրթական գործը Կեսարիայի ամբողջ Վիճակում տարածելու, եղածը բարելավելու, զարգացնելու ծրագրեր էր մշակում և իր կարողություններն ու գործնական մարդու ընդունակությունները ամբողջովին տրամադրում դրա իրականացմանը, որպես հիանալի կազմակերպիչ, ընդգրկելով նաև կարող օգնական ուժեր: Ծրագրեր կազմելու և իրականացնելու նրա ունակությունը զարմացնում է ունեցած հիմնավոր համակողմանիությամբ և տրամաբանվածությամբ. չնայած իր ստացած սահմանափակ, ո՛չ այնքան փայլուն կրթության, բնատուր տաղանդի ուժով, ժամանակակիցների հավասամամբ, կարողանում էր կրթական գործը կազմակերպել, բարձրացնել այնպիսի մակարդակի, որպիսին Կեսարիայում երբևէ չէր եղել [12]: Նրա կարծիքով կարող էր շատ ավելի նպա-

տակահարմար լինել, եթէ Կեսարիայի չորս վանքերը (Ս. Աստուածածին, Ս. Սարգիս, Ս. Դանիել, Ս. Կարապետ) միացնելով, ստեղծվեր միասնական կրթական համակարգ, բոլորի մեջ էլ պահելով մեկական դասարան, համապատասխանաբար սկսելով Ս. Աստվածածնի վանքում տարրական դասարանից և վերջացնելով Ս. Կարապետի երկու ավարտական դասարաններով: Եվ կարճ ժամանակից իր ծրագիրը վերածեց գործի: 1900–ի հունվարին արդեն Պատրիարքարանին տեղեկացրել է ծրագրի մի մասի իրականացումը, այն է՝ «...տեղւոյն Ս. Կարապետի, Տէրէվանքի Ս. Սարգիս և Թամզարայի Ս. Աստուածածին վանքերը միացուցած է: Ս. Կարապետ իբր Մայրավանք կ կստավարուի առաջնորդին հսկողութեան տակ, իսկ մյուս երկուքին մէջ իր կողմէ վախանորդ վարդապետներ կարգած է: ...Առաջնորդը կ՚գբէ նաև թէ անցեալ Դեկտեմբերին Թամզարայի վանքին մէջ Ընծայարան–դպրանոց մը հաստատած է, ուր կը պատսպարուին շրջականերէն հաւաքուած տասներկու աղքատիկ աշակերտներ ձրիաբար, և ուր հատ ալ թոշակաւոր: ...Առաջնորդը կ՚յաւելու նաև թէ պիտի ջանայ այսպիսի ընծայարան մ՚ալ բանալ Տէրէվանքի Ս. Սարգիս վանքին մէջ» [13]:

Ժամանակի ընթացքում Կեսարիայից և շրջակայքից գիշերօթիկ վարժարանում սովորողների թիվն արդեն այնքան էր մեծացել, որ նոր շենքի կարիք էր զգացվում: Իր «Հաշիւ արդեանց և ծախուց Ս. Կարապետի վանուց և վարժարանին Կեսարիոյ» հոդված–հաշվետվության մեջ Պալյանը գրել է. «... ընդարձակ գետնի մը վրայ, ի հիմանէ նոր վարժարանի մը կառուցման ձեռնարկած էինք, իր ամէն պարագաներովը: Այս նոր վարժարանին շինութիւնն աւարտեցաւ այժմ, ուր պիտի վտխադրուինք յառաջիկայ Մեպտեմբեր ամսոյ վերջերը, և ուր պիտի սկսինք նաև վարժարանին տասն և եօթներորդ տարեշրջանը» [14]: Նորակառույց վարժարանի մասին «Արևելյան մամուլ» ը հիացմունքով գրել է. «Կեսարիոյ բարեջան Առաջնորդ Գեր. Տրդատ հսլիս. Պալեան պատիւ ըրած է մեզ ղրկելու Կեսարիոյ Ս. Կարապետի վանքին կից նորակառոյց վարժարանին լուսանկարը. սոյն կրթարանին շինութիւնը ասկից չորս–հինգ ամիս առաջ ամբողջովին աւարտած և անցեալ Հոկտեմբեր ամսոյ մէջ ալ նիրքին կահաւորումը լրանալով՝ տեղափոխութիւնը կատարուած է նոյն ամսուն և դասախօսութիւնք սկսած են բոլորովին նոր ծրագրով և նոր կարգադրութեամբ: Ջերմապէս կ՚շնորհաւորենք Պալեան Սրբազանը այս գեղեցիկ յաջողութեան համար, որով Կեսարիոյ նման բազմահայ վիճակ մը կրցաւ օժտել կրթական հաստատութեամբ մը և այս՝ գլխաւորապէս շնորհիւ իր յարատեւող և կրթասէր ոգիին և մասամբ Կեսարացի ազգայնոց փոյթեռանդն գործակցութեան: Բայց մեր շնորհաւորութիւնները չեն սահմանափակուիր միայն շէնքին նիւթական կառուցման տեսակէտին մէջ՝ որ արդէն ինքնին մեծ բան կ՚արժէ իր ճարտարապետական և առող-

ջապահական պայմաններու համապատասխան գեղեցիկ շինուածքով. իր ընդարձակութեամբ, իր բաժանումներով, իր բարձր և օդասուն դիրքով, այլ նաև և մանաւանդ բարոյական տեսակէտին մէջ, որով Կեսարիոյ և շրջակայից ուսումնածարաւ պատանիները միջնակարգ կրթութիւն մը ստանալու ամէն դիւրութիւնները կ՚վայելեն և բնատոհմիկ դաստիարակութեան մը հետ գիտական ուսմանց համեստ պաշարով մը լեցնելով իրենց միտքը՝ իրենց համայնքին համար էապէս օգտակար և պատուաբեր անդամներ ըլլալու կ՚պատրաստուին և իրենց միջավայրին կրթական մակարդակը հետզհետէ բաղձալի բարձրութեան հասցնելու գործին սատարներ կ՚հանդիսանան» [15]: Նորացված, ավելի ընդարձակված Ս. Կարապետի գիշերօթիկը այդուհետև հայտնի է եղել որպես Բարձրագույն վարժարան, որ շարունակել է գործել Պալյանի հարկադրական հրաժարականից հետո ևս, մինչև 1915 թ., չնայած մի պահ կանգնել էր փակվելու վտանգի սաջև[16]: 1913 թ. նոյեմբեր–դեկտեմբերին Կիսարիա՝ Ս. Կարապետ այցելած Թորգոմ եպիսկոպոսի (Գուշակյան) ճշմարիտ գնահատությամբ՝ «... Պետք մ՚էր այդ վարժարանին գոյութիւնը այդ շրջանին համար, ուր չէր կրնար հասնիլ ո՛չ ոեւէ ամերիկեան գօլէճի ազդեցութիւնը եւ ո՛չ ալ մայրաքաղաքի կրթական հոսանքներուն ոյժը... Այդ պետքը կշռելու իմաստութիւնը եւ անոր գոհացում տալու ջանասիրութիւնն ունեցած է Տ. Տրդատ եպսկ. Պաղհան, Կեսարիոյ նախկին առաջնորդը: ... Բայց ինչ որ շօշափելիօրէն ճշմարիտ է ինծի համար, այն է, թէ Ս. Կարապետի վանքը, քառորդ դարու իր բարգաւաճ դրութիւնն եւ ապագայի ըսա ինքեան ապահովուած կացութիւնը կ՚պարտի այդ կորովի մարդուն, իր ամէնէն թունդ հակառակորդները, անոնք նոյնիսկ որոնց համար անոր դէմ հակառակիլը տեսակ մը հրայրք է դարձած, կխոսաովանին այս պարագան. Տրդատ եպիսկոպոսի վերաբերմամբ կիրքերը կ՚լռեն Ս. Կարապետի մենաստանէն ներս ու կ՚խօսին քարերը միայն... Տրդատ եպիսկոպոս մէկն է այն երջանիկ մարդերէն որոնց անունը երկար ատեն կապուած պիտի մնայ կրթական հաստատութեան մը կեանքին ու արդիւնքներուն հետ...» [17]:

Առաջնորդ–վանահորը մտահոգել են ոչ միայն իր թեմի հոգսերն ու կարիքները կամ կրթական գործը. որպես ճշմարիտ, կոչումին արժանի հոգևորական՝ նրան հուզել է նաև օտար երկրներ մեկնած հայ պանդուխտների ճակատագիրը, ազգային հիվանդանոցների նյութական–դրամական վիճակը, եկեղեցական սպաս ու առարկաներ չունեցող եկեղեցիների և հոգևորականների վիճակը[18]: Պալյանի ուշադրությունից չեն վրիպել նաև մանկապարտեզի[19], որ առդէն 1897 թվականին «հաստատված է այսպիսի գոհացուցիչ վիճակի մը» [20] և կրկին նույն ժամանակ հաստատված իգական վարժարանի հարցերը[21]:

Չպիտք է կարծել սակայն, թէ իր կրթական գործունեության ընթացքում Պալյանը շրջապատված է եղել միայն համակիրներով ու աջակիցներով. որոշ թարք պաշտոնյաներից, ինչպես նաև, դժբախտաբար, հայ կուսակցական տարբեր խմբավորումներից բաղկացած հակառակորդների և բանսարկուների մի ողջ ռհմակ–բանակ իր «սուրբ» պարտքն է համարել պարբերաբար մրոտել Առաջնորդի անբասիր, մաքուր անունը՝ կասկածի տակ առնելով նրա ազնվությունը և հոգևոր գործչի բարի համբավը: Այդ նպատակով շրջանառութեան մեջ են դրվել ամենատարբեր իրական և անիրական լուրեր, օրինակ՝ հեղափոխական Ժիրայրի դեպքը[22], օտար կրթական և այլ հաստատություններ հաճախելու արգելքը, գիշերօթիկ վարժարանի՝ Կեսարիայում կամ նրանից դուրս լինելու պարագան, այդ վարժարանում պահքի օրերը չպահելու կամ «ծոմ ուրելու նման ծքռած յեբիւրանքներ»[23] և այլն:

Այդ հարձակումներից, Պալեանը, իհարկե, չի նահանջել և իր իրավացիության ու պարտքի գիտակցությամբ 23 տարի անվարան շարունակել է առաջնորդական գործունեությունը. «Պաշտօնիս և կոչումիս բերումով, ինչպէս առաջներն և մանաւանդ ազատութեան հռչակամէն ի վեր (1908, Յուլիս 11) աներկիւղ, ազատօրէն պաշտպանեցի Կեսարիոյ և շրջակայ գիւղերու հայ ժողովրդեանս շահերն և ազգային իրաւունքները»[24]: Ի պաշտպանություն Տրդատ եպիսկոպոսի մամուլում հանդես են եկել իր նախկին և ներկա աշակերտներ, գործակիցներ, խմբագիրներ՝ Մելքոն Ասատուր, Երվանդ Երկաթյան, Ներսես Ստեփանյան, Մատթեոս Մամարյան, Բյուզանդ Քեչյան, Զավեն, Աբրահամ Ֆրենկյան: Վերջինս հիշում է. «...ես ալ Պատրիարքարանի գործակատար էի, Կեսարիոյ առաջնորդ ընտրուած ըլլալուն, ընդհանուր վիճակին վրայ անոր տարածած խնամատարութիւնը այս տեղէն կը դիտէի, որոյ մանրամասնութիւնը զմայլանքով սրտիս մէկ անկիւնը քանդակած ըլլալուս կուգամ արտայայտել» : Այնուհետև պատմում է, թե ինչպես է Պալյանը թուրք խուժանի հերթական ավազակային հարձակումից փրկել կեսարացի բազմաթիվ հայ ընտանիքների, նրանց անաղմուկ փոխադրելով վանք, նախապես այնտեղ ամբարելով նաև բավականաչափ պտուղներ՝:

Սակայն, Առաջնորդի համբերության բաժակը, հավանաբար, արդեն լցվել էր. նրան մարկաբեկելու նպատակով հոդվածներ են տպվել թուրքերեն և հայատառ թուրքերեն թերթերում, հաճախ կանչվել է Պատրիարքարան ու դատարան՝ բացատրություններ տալու և այլն: 1909 թվականի Փետրվարի 19ին պատրիարքական տեղապահին ներկայացրել է իր հրաժարականը, որ թեև միանգամից չի ընդունվել, բայց Երուսաղեմ գնալու և Վիճակից երկար ժամանակով բացակայելու սահքն օգտագործելով, Կեսարիայի գավառական ժողովը պահանջել է նոր ընտրություններ[26]: Հետագա զրպարտություններից խուսափելու համար Պո-

լիս – Երուսաղեմ մեկնելուց առաջ քաղաքային ժողովի երեք անդամների ներկայությամբ կատարել է Ս. Կարապետի գույքի և ունեցվածքի հաշվառում. «...եկեղեցական թանկարժէք անօթները մէկիկ մէկիկ աչքէ անցնելով, և 23 տարի սաաջ իրեն յանձնուած ցուցակին համապատասխան գտան և այդ երկար տարիներու միջոցին ալ եկած թանկ նուէրներու ցանկն ալ աւելցուելով միւսներուն վրայ, կնքել տուաւ գանձատունն և վարժարանի ճոխ թանգարանը: Ներկայացուց նաև վանքին ու վարժարանին հաշիւներու ստուար տոմարները, ուր պատկերացած են ամէն հաշիւ մանրամասնօրէն» [27]: Անհրաժեշտ է համարել նաև դիմել ժողովրդին և ասել. «Որոնք որ առնելիք մ՛ունին իրմէ անհատապէս և կամ ազգովին, թո՛ղ դիմեն իրեն, և մեկնելէ առաջ պատրաստ է վճարել ցյեահին լուման» [28]: 1910 թվականի ապրիլի սկզբներին վարչության որոշմամբ[29] մեկնել է Պոլսից դեպի Երուսաղեմ՝ իրեն ճանապարհողներին պատմելով, թե ինչպես 23 տարի առաջ, երբ Ղևոնդ Մաքսուդյան վարդապետի վարմունքից սրտնեղած թողել է վանքը, վերջինիս ասել է. «Հալածական կ՛մեկնիմ, բայց օր մը պիտի գամ ձեր խանգարածը շտկելու համար» [30]: «Արևելեան մամուլ» ի խմբագրականի հեղինակի կարծիքով միակ մարդը, որ կարող էր կարգավորել Երուսաղէմի խճճված, մշտապես քննարկվող հարցը, Պալյան եպիսկոպոսն էր[31]: Եվ մինչդեռ նա վարձում էր այնտեղ գործերը շտկել և կարգի բերել, իր հակառակորդները շարունակում էին զրպարտագրերով արատավորել նրա անունը[32], չնայած որ դատարանը թեև ուշացումով, այնուամենայնիվ «...վերջապէս անպարտութեան վճիռն արձակեց, մեծ ուրախութիւն պատճառելով հայ բարձրաստիճան կրօնաւորի մը համակիրներուն և ազգին: Տ. Տրդատ Եպիսկ. քաջութիւնն ունեցած էր քայլ սա քայլ պաշտպանելու առաջնորդական իրաւունքն ու առանձնաշնորհումը: Այս հրճուալից լուրն հեռագրուեցաւ Ն. Սրբազնութեան, կնճիռներով լեցուն անոր ճակտին ժպիտի նշոյլ մը տալու համար գէթ» [33]:

Վերջնականապես հրաժարվել է 1911 թվականին, տեղավախվելով Մաղնիսա՝ մոր և եղբոր մոտ և նվիրվելով «բանասիրական աշխատութեանց», հրատարակության պատրաստելով «Հայ աշուղներ» ի առաջին հասարը և մյուս գործերը: Մինչև 1922 թ. ապրել է Մաղնիսայում, «օրերս կ՛անցնեմ կարդալով և գրելով», Մեպտեմբերի սկզբներին տեղափոխվել է Իզմիր, իր հետ տանելով դրամների ու նամակադրոշմի հարուստ հավաքածուները, ձեռագրերն ա տպագիր գրքերը, բանահյուսական, ազգագրական նյութերը, գորգերը և այն ամենը, ինչ 30 տարվա ընթացքում աշխատանքով հավաքել էր, մտածելով որ այնտեղ անվտանգ կարող է լինել. «...բայց դժբախտաբար մեր մտածումը պարապի ելաւ. Մուսթաֆայ Քէմալի և իւր անօրէն զօրքերու վայրագութեան միջոցաւ ամենամեծ հալածումի, կողոպուտի ենթարկուեցայ, ինչպէս նաև բոլոր

Հայերը. Իզմիրի մէջ տառապանքը մեծ էր, ամբողջ Հայոց թաղը կրակի տուին...», և ստիպված՝ հագի միակ վերարկուով փախչում է, մի քանի օր թաքնվելով–թափառելով, մինչև որ տասնհինգ օր հետո հաջողվում է հունական շոգենավ նստել և հասնել Աթենք[34]: Աթենքում նրա ֆիզիկական ու հոգեկան տառապանքների մասին գրել է Հ. Տարագիրը. «Տրդատ Սրբազան, Իզմիրի աղէտէն վերջ, Յունաստան ապաստանելէ յետայ, Աթենքի հայ մատուռին շրջափակի խցիկին մէջ ապրեցաւ խճողուած գաղթականներու բազմութեան մը հետ քով քովի, անբացատրելի աղտի ու անմաքրութեան մէջ, մինչև 1923 թուականի փետրուար: Ատկէ վերջն է, որ պ. Յ. Դարբինեան[35] յաջողեցաւ համոզել զինքը և վախադրել վարձուած մասնաւոր սենեակ մը, ուր կ՚ապրէր իր քրոջ և քեռորդիներուն հետ և ուր թէ՛ գոհ էր և թէ՛ հանգիստ: ...Տրդատ Արբազան, ինչպէս յայտնի է, տարիներէ ի վեր առանձնացած կեանք մը կ՚ապրէր Մաղնիսայի մէջ, մինչև վերջին աղէտին օրերը: Հոս, Աթէնքի մէջ ալ, մանաւանդ մինչև առանձին սենեակ մը փոխադրուիլը, բոլորովին ընկճուած էր, ու ոչինչ մնացած էր իր վրայ նախկին գործունեայ ու կորովի եկեղեցականէն: ...մանաւանդ կ՚ողբար ու կը ցաւէր անտիպ մոխրացած ու կորսուած իր գրական աշխատութիւններուն ու հին ձեռագրերու հաւաքածոյին ու մատենադարանին վրայ» [36]: 1923 թ. հուլիսի 2–ին վախճանվել է ժանտախտից, թաղվել Աթենքում, ապա՝ վերաթաղվել Երուսաղեմում:

Ստեղծել է «Հրատարակչական միութիւն Ս. Կարապետի վանուց» անունով ընկերություն, որ ծրագրել էր դասագրքեր հրատարակել. ստույգ հայտնի չէ՝ այս Ընկերությունը դասագրքեր հրատարակե՞լ է, թի՞ ոչ[37]:

Դպրոցական–կրթական գործին զուգընթաց և միաժամանակ՝ հաջորդ քայլը մատենադարանի ու թանգարանի հիմնադրումն էր[38], որի համար չի խնայել իր անձնական կարողությունը՝ «ուր զետեղած եմ ձեռագիր մատեանք թուով գրեթէ հարիւր և տպագրեալ գրեանք՝ թուով հինգ հարիւր» («Արևելեան մամուլ», 1890, էջ 377) : Կարճ ժամանակ անց ձեռագրերի թիվը հասել է հարյուր ութսունի, իսկ տպագիր գրքերինը՝ հազարի, 1897 թվականին՝ «Վանուցս մատենադարանը կ՚պարունակէ այժմ իբր 1500 զանազան ձեռագիր և տպագիր մատեանք, և միշտ բաց է միայն աշակերտաց համար՝ որք ըստ իրենց հասակին և ճաշակին յարմար գիրքեր կրնան ուսումնասիրել» [39]: Երազում էր իր ծննդավայրում ստեղծել Երուսաղեմի մատենադարանի նման հարուստ հաստատություն, որտեղ պետք է հավաքեր ձեռագրեր, հնատիպ գրականություն, հնագիտական զանազան իրեր ու առարկաներ: Այդ ամենը նպաստելու էր ո՛չ միայն ուսումնական ծրագրերին. «Երբ 1887 թուականին, Կեսարիոյ վիճակին Առաջնորդական պաշտօնն խոնարհաբար ստանձնեցինք, ի միջի այլոց մտադրութիւն մ՚ունեցանք նաև, նոյն վիճակին թէ՛

Վանորէից, թէ՛ Ս. Եկեղեցեաց մատենադարանաց մէջ, և թէ՛ անհատից մօտ գտնուած բոլոր հայերէն ձեռագիր մատենից մի ցուցակն կազմատրել կանոնաւորապէս, ըստ արդի պահանջման, մանրամասն տեղեկութեամբ և հանդերձ յիշատակարանօք, մտադրութիւն մը՝ որ ի գործ կը դնէինք նոյն թուականէն ի վեր, երբ առիթէն կ՛օգտուէինք»[40]: Այդ մտադրությամբ պարբերականներում[41] կամ առանձին պրակներով նա նկարագրել և հրատարակել է Կեսարիայի Ս. Սարգիս (14), Ս. Աստուածածին (25), Ս. Գէորգ (2), Ս. Կարապետ (44) և Ս. Դանիել (5)[42], Ս. Թորոս (4), Ս. Խաչ (6), Ս. Սիոն (10) և Ս. Լուսաւորիչ (2), Ս. Ստեփաննոս (9), (վերջին երեքը Զմիւռնիայի վիճակ), Թալասի Վարդապատրիկեան վարժարանի, Ս. Աստուածածին (14) եկեղեցիների ու վանքերի. իր (1), ինչպես նաև մասնավոր անձանց ունեցած (8) ձեռագրերը: Առիթից օգտվելով, Էջմիածնում եղած ժամանակ նկարագրել է Էջմիածնի Ավետարանը (հմր. 229, այժմ՝ Մաշտոցյան Մատենադարան՝ 2374)[43], Պոլիս վերադարձին՝ Թիֆլիսում մեկ–երկու օր մնալով, նկարագրել է Մողնու Ս. Գէորգ եկեղեցու Ավետարանը (այժմ Մաշտոցյան Մատենադարան՝ 7736) : Ծրագրել էր կազմել Թ–ԺԵ. դարերի Ավետարանների ամբողջական ցուցակ և հրատարակել պատկերազարդ, առանձին գրքույկով[44]:

Ձեռագրերի նկարագրությունից զատ և միաժամանակ զբաղվել է հայկական տպագիր գրքի, պոլսահայ տպագրության պատմությամբ[45], կարևոր ճշտումներ անելով որոշ հնատիպ հրատարակությունների[46], ինչպես նաև հայերեն առաջին տպագիր գրքի թվագրման հարցում[47], հրատարակել նոր, մինչ այդ հայագիտությանն անհայտ տեղեկություններ պարունակող հոդվածներ[48]: «Անյիշատակ տպագրութիւններ», «Անահպ յիշաաակարաններ և անյիշատակ տպագրութիւններ», «Հայերէն հին տպագրութիւնք» վերնագրերով հոդվածներ է հրատարակել «Հանդէս ամսօրեայ», «Բիւրակն», «Արևելեան մամուլ» հանդեսներում: ԿԱՊԵՏ ծածկանունով 1903–5 թթ. հայկական հնատիպ գրքի մատենագիտություն է հրատարակել Փարիզի «Բանասէր» հանդեսում[49]. տպագրությունն անավարտ է մնացել, որովհետև իր խոսքերով՝ «...ստորագրութիւնս մեկնած էին կառավարական շրջանակին մէջ, և պատասխանատուութեան պիտի ենթարկուէի. բայց փստք Աստուծոյ, զանազան ուրացումներով և պատճառաբանութիւններով ազատեցայ: Այս հաւաքածոյս ալ բաւական կարևոր գործ մըն է, կը կարծեմ... ԿԱՊԵՏ, վերջին տառէն սկսեալ Տրդատ Եպս. Պալեան, Առաջնորդ Կեսարիոյ կը նշանակէր»[50]: Այս գործը, որ բաժանել է երկու հատորի՝ Ա. 1512–1800 թթ., Բ. 1801–50 թթ., և որը հետո լրացնելով հասցրել է մինչև 1900 թ., ինչպես ինքն է ասում, սկսել էր «1881 թուականէն ի վեր, որ ժամանակ դեռ կ՛գտնուէինք ի Ա. Երուսաղէմ, երբ յուրգելի Ա. Երէցեանի «Պատմական տեսութիւն հայ տպագրութեան մինչև տասնեհիններորդ դար» ընդարձակ յօդուածն[51]

երևցաւ ի Տփղիս...». կազմել է ժամանակագրական սկզբունքով, նկատի ունենալով Ա. Երիցյանի վերոնշյալ և Գ. Զարպհանալյանի «Հայկական մատենագիտութիւն» գործերի պակասող մասերը: Մամուլից տեղեկանալով Սխիթարյան միաբան Հ. Արսեն Ղազիկյանի հրատարակութեան պատրաստվող նոյնաբնույթ աշխատանքի մասին և գիտակցելով այդպիսի հրատարակության հնարավորինս կատարյալ և անթերի լինելու կարևորությունը՝ պատրաստակամորեն առաջարկել է իր օգնությունը. «...մեր սոյն աշխատասիրութիւնն առանձին տպագրութեամբ ի լոյս ընծայելու յոյսը չունինք, այլ յառաջիկային մասնաւոր ամսաթերթի կամ շաբաթաթերթի մը մէջ կարգաւ և ամբողջութեամբ հրատարակելու նպատակ մը միայն, որով կ'կարծենք թէ վաքր ինչ օգտակար կրնանք ըլլալ Հ. Արսէն Ղազիկեանի պատրաստելիք նոյնպիսի գործին կատարելագործման համար» [52]: Գրել է նաև Իսա Յուվան ծածկանունով[53]:

Հետաքրքրվել է հնագիտությամբ. հավաքել է կնիքներ, դրամներ, դրոշմաթղթեր, արձանագրություններ, այն ամենը՝ ինչ կարող էր հնագիտական արժեք ունենալ, հրատարակել և վարձել է վերծանել դրանք:

Պալյանի ամբողջ գործունեությունն իր ազնիվ, սրտացավ էությունից, ներքին մղումից բխած պահանջ–ծրագիր էր: «Հայ վանորայք ի Թուրքիա» գրքի առաջաբանում խոսելով եկեղեցիների, վանքերի ու վանական հաստատությունների անցյալի գործունեության մասին և համեմատելով իր ժամանակի հետ, գրել է. «Ահաւասիկ այնպիսի փստաւոր վիճակէն ներկայ անկերպարան ու ցաւալի վիճակին հասած հայ վանորէից, նոյն իսկ շատ համառօտ տեղագրութիւնը գրելու համար տոկուն գրիչ, դիմացկուն սիրտ և չարտասուելու աստիճան ալ աչքեր կ'ուզէ» : Այս գործի պատրաստությունն էլ սկսել է դեռևս 1883 թվականին և անընդհատ շարունակելով, լրացնելով, ընթացքում հրապարակելով, որպես առաջին ամբողջական հասար 1914 թվականին հրատարակել է Զմյուռնիայում[54]: 1897–1908 թթ. «Բիւզանդիոն» թերթում[55] և 1906 թ. «Լոյս» հանդեսում «Հայ վանորայք», «Նոր ցուցակ հայ վանորէից», «Յուցակ հայ վանորէից» վերնագրերով մաս–մաս հրապարակել է վանքերի մասին իր ուսումնասիրություն–հոդվածաշարը, ընդ որում՝ նախ ըստ տոնացույցի խմբավորել և տասնչորս հոդվածով ամեն սրբի առնի օրը հրատարակել է նրա անվամբ վանքերի նկարագրությունը, ապա, ընդառաջելով բարեկամ–նամակագիրների ցանկությանը, սկսել է ցանկել ըստ գավառների, որի հետևանքով որոշ նկարագրություններ երբեմն կրկնվել են:

Ինքն իր այս աշխատանքի մասին համեստորեն գրել է. «Գալով մեր այս գործին ու աշխատութեան, անկեղծօրէն կը խոստովանինք թէ, երբեք չենք յաւակնիր ըսելու, «պատմութիւն» կամ «տեղագրութիւն» հայ վանօրէից, այլ պարզապէս կ'ըսենք ու ըսած ենք «Հայ Վանորայք», և

այն ալ մեր ծանօթութեան և կարելիութեան. մանաւանդ մեր կարողութեան սահմանին մէջ համառօտակի տեղագրելով» [56]: Նկարագրություններն ընդհանուր առմամբ ունեն հետևյալ մոտավոր հարցակետերը. տեղագրություն, հողևոր և աշխարհիկ շինություններ, ժամանակ, ճարտարապետություն, արձանագրություններ (շինարարական, նորոգման), վանական տնտեսություն, մշակութային արժեքներ, սրբավայրեր, ավանդություններ և գրավոր վկայություններ[57], առաջնորդների ու վանահայրերի ցանկ, ներկա (Պալյանի ժամանակի) վիճակ: Առաջնորդի բազմազբաղ գործունեությունը, անհրաժեշտ նյութի և գրականության բացակայությունը, վանքեր այցելելու, անձամբ տեսնելու և ստուգելու անհնարինությունը խանգարել են, և միշտ չէ, որ հաջողվել է կատարյալ նկարագրություն տալ: Այդուհանդերձ, կրկնակի մեծ է Պալյանի կատարած գործի նշանակությունը, քանի որ այսօր այդ վանքերը չեն պահպանվել, և հիմնականում ականատեսի այդ նկարագրությունները պահպանված միակ վկայություններն են ու սկզբնաղբյուրի արժեք ունեն: Այս գործի առիթով կազմել է նաև Կեսարիայի Ս. Կարապետ, Ս. Դանիել, Զմիտնիայի Ս. Ստեփանոս, Սեբաստիայի Ս. Նշան, Մարզուանի Ս. Աստուածածին վանքերի առաջնորդների գավազանագրքեր:

Պալյանն իր բոլոր գործերը (բացի մեկից՝ «Սուրբ Երկիր») նախապես հրապարակել է մամուլում և խնդրանքով դիմել ընթերցողներին, մանավանդ, ինչպես ինքն է ասում՝ բանասեր–վանասերներին, որպեսզի ճշտեն, լրացնեն, եթե դրա կարիքը կա, այսպիսով պարբերականների էջերում կազմակերպելով մի տեսակ քննարկում և երախտագիտությամբ ընդունելով հրապարակված առաջարկները:

Պալյանի բանահավաքչական աշխատանքն սկսվել է դեռևս - Մաղնիսայում գտնված ժամանակ՝ 1865–78 թվականներին, աշուղներին վերաբերող նյութերի հավաքումով: Ավելի ուշ՝ Երուսաղեմում և Կեսարիայի առաջնորդական պաշտոնում ունեցածը լրացրել, ամբողջացրել է ձեռագրական, մատենագրական նյութերով և դասակարգել այբբենական կարգով: Բանահյուսական նյութը հրապարակել է «Ծաղիկ» և «Բիւրակն», մասամբ էլ «Արևելեան Մամուլ» հանդեսներում: Կարողացել է հրատարակել «Հայ աշուղներ» ի[58] միայն երկու հատոր և առածների ու ասացվածքների[59] երկու պրակ, որովհետև որքան էլ մեծ էր ցանկությունը՝ «ժամ առաջ հրատարակուած տեսնելու Հայ աշուղներու պատմութիւնն, բայց զայն հրատարակութեան տալու հապճեպը չը պիտի ունենամ, մինչև որ ամվսի և կատարեալ վիճակի մը չը հասցնեմ» [60]: Սակայն եղածը երբեք բավարար չի համարել, այլ իր լայն մտահորիզոնի համեմատ կարծել է, որ պետք է գրվեն և հրատարակվեն նաև՝ Հայ դպրոցների, գրադարանների ու թանգարանների, վանքերի ու եկեղեցի-

ների պատմությունը, ուսուցիչների և գիտնականների, հոգևորականների, բժիշկների և արհեստավորների պատմությունը:

Իր կյանքի ընթացքում բազմիցս ուշադրության է արժանացել կոչվելով բարձր պաշտոնների. 1900 թ. «հաղորդուած է Պալեան Տ. Տրդատ եպիսկոպոսի Խառն Ժողովոյ կողմէ իրեն յանձնուած եկեղեցական առժամեայ պաշտօնը և յանձնարարուած է պատրաստ գտնուիլ մեկնելու իրեն համար որոշուած տեղը...», սակայն վատառողջության պատճառով Պալյանը հրաժարվել է այդ պաշտոնից: 1902 թվականին եղել է Կիլիկիայի կաթողիկոսական ընտրության վեց թեկնածուներից մեկը և ստացել է ձայների առավելագույնը՝ 44 քվե, ապա վեցանուն ցանկը Պատրիարքարանի միջոցով ուղարկվել է Բ. Դուռ, որտեղ ցուցակը փոխվել է և Պալյանի անունը դուրս թողնվել: 1910 թ. ընտրվել է Տրապիզոնի առաջնորդ, որից նույնպես հրաժարվել է: 1911ին Երուսաղեմի պատրիարքական ընտրությունների ցանկում դարձյալ երևում է նրա անունը: 1913ին Երուսաղեմի միաբանական ժողովը որպես ընտրյալ Տեղապահ պաշտոնավարելու համար հեռագրով Պալյանին հրավիրել է Երուսաղեմ, որին ևս պատասխանել է մերժումով, քանի որ ընտրությունը համարել է ապօրեն և կենտրոնի կողմից չվավերացված: Վերջապես՝ 1921 թվականին. «...Ս. Յակոբեանք... միասերած են իրենց պատրիարքական ընտրելեաց ցանկը պատրաստելու, որոնցմէ վերջին եռանունը կը նշանակէր իբր ընտրելի ազգ. ժողովէն ամեն. Տ. Եղիշէ արքեպսկ. Դուրեան, Գեր. Եղիշէ արքեպ. Չիլինկիրեան, Գեր. Տ. Տրդատ արքեպ. Պալեան, երեքն ալ ներսէն... ու երրորդը՝ կեսարեան իբահամարձակութեամբ և պսակեալ վարձառու ծերութեամբ թէ՛ վանքին, թէ՛ արտաքին իրաց և խորհրդոց» [61]:

Կանոնավոր նամակագրություն է ունեցել Պատրիարքարանի, թերթերի ու ամսագրերի («Բիւզանդիոն», «Բիւրակն», «Ծաղիկ», «Արևելեան մամուլ», «Հանդէս ամսօրեայ») խմբագիրների[62], Կ. Բասմաջյանի, Ն. Ակինյանի, Վահան Իսպէչէրյանի հետ, որից քիչ բան է պահպանվել՝ միայն առիթով հրատարակվածները:

Տրդատ եպիսկոպոս Պալյանը, ականատեսների վկայությամբ, ունեցել է պատկառելի արտաքին և համեստ բնավորություն. չի սիրել ցուցադրական մեծարանքներ, երբևէ թույլ չի ավել իր նկատմամբ հանդիսավոր ցույցեր, ամեն ինչի մեջ սիրել է պարզություն՝ «և ամէն բան իր իրական վիճակին մէջ տեսնել ու ցուցնել կ՚ուզենք առանց շռնդալից հանդէսներու, զոր ո՛չ կ՚ընենք և ո՛չ ալ ընել կ՚հրամայենք, բայց ընողներուն ալ արգելք չենք ըլլար: Ինչ ընենք, չենք կրնար շեղիլ մեր այս ընթացքէն, և այս ալ մեզ համար թո՛ղ պակասութիւն համարուի, հոգ չէ» [63]: Իր մեջ ներդաշնակորեն համատեղելով հոգևոր հովվի, վարդապետ-ուսուցչի, բանահավաքի, հնագետի, ձեռագրագետի ունակությունները, միանգա-

մայն իրականորեն պատկերացրել և համեստորեն գիտակցել է իր արածի նշանակությունը. «Մենք այսպիսի հրատարակութիւններով. ինչպէս ըսած ենք ժամանակին ալ, ուսումնասիրութիւն մը տուած ըլլալու յաւակնոտութիւնը չունինք երբեք, այլ ցանկ մը, կամ թէ ըսենք՝ անտաշ ատաղձ մը, սա համոզումով թէ՝ ապագային կարող ու հմուտ գրիչներու միջոցաւ աշխուելով, յղկուելով և ընդարձակուելով. փայլուն ու կատարեալ գործ մը կ՚արտադրուի, որուն մենք ալ շատ վաքրիկ ծառայութիւն մը ըրած կը համարուինք»[64]:

Գրական գործունեության ամբողջ ընթացքում Պալյանը հրատարակել է միայն ինն անուն գիրք՝ «Սուրբ երկիր. Նկարագրութիւն Ս. Երուսաղէմի» (1892), Կեսարիայի ձեռագրացուցակները (1892, 1893, 1897), Հայ աշուղներ (1911, 1912), Առածներ (1912), Հայ վանորայք (1914). իսկ 1890–1921 թթ. պարբերականների էջերում ցրված՝ մոտ երկու հարյուր հոդված: Ունեցել է բազմաթիվ անտիպ գործեր (ուսումնասիրություններ և բանահյուսական նյութ) որոնք թերևս անդարձ կորած են գիտության համար՝ Եկեղեցական միաբանք Ս. Երուսաղեմի. Վիճակ Կեսարիո, Առակներ, Հեքեաթներ, Ժողովրդական առածներ (հայերեն, թուրքերեն), Հայկական սովորություններ, Բուսական, կենդանական բառեր, Բառարան աշխարհաբարի համար, Բառարան – «Գավառական բառեր Կեսարիոյ և շրջակայ հայ գիւղորէից», Ինքնակենսագրություն, «Հավաքածոյ երևելի եկեղեցական և աշխարհական անձանց ստորագրութիւնների ու կնիքների», մասնավորապես՝ Պեզճյան, Տյուզյանց, Նորատունկյան ամիրաների:

ՀԱՎԵԼՎԱԾ

1. Տ. Պալյանի նամակը Կարապետ Բասմաջյանին

1891 մայիս 21, Կեսարիա

Ազնուաշուք Կարապետ էֆ. Յ. Պասմաճեան, ի Կ. Պոլիս

Շնորհակալութեամբ ընդունած եմ Ձեր Ապրիլ 21 թուակիր նամակն. հառաչելով կարդացի Ձեր ազգային հին ձեռագիրներու մասին գրածներն եւ սակայն ողբալով եւ լալով պատահած էի ես եւս ժամանակին այնպիսի գրչագրաց, որոց ճակատէն, եզերքէն, խորաններն, եզերազարդերն, զարդագրերն երեւելի գեղարուեստք, զանազան ձեռքեր մկլսսած հանած են:

Պատահած եմ այնպիսի գրչագրաց՝ որոց սկիզբէն եւ վերջէն հանդերձ յիշատակարանօք թղթեր հանած են:

Պատահած եմ այնպիսի գրչագրաց, զորս եկեղեցեաց, վանօրէից, եկեղեցականաց տանց մի մի անկիւններու մէջ փաշիներով բեռնատրո-

ուած եւ իբրեւ անյարգ բան նեսաւած եւ ցեցերու կեր եղած էին, քայքայուելու, փճանալու, փտանալու աստիճանին հասած:

Պատահած եմ այնպիսի գրչագրաց զորս պստաւ եւ բարեպաշտ կանայք, իւրեանց պանիրի ելն տիկերուն վրայ իբրեւ կափարիչ կը գործածէին, օրհնութիւն համարելով որպէս զի տիկերու մէջ գտնուած իրերը չպակսին. հազիւ եւ շատ դժուարութեամբ առած եմ օրինակելու համար, եւ ապա առանց նոցա բարեպաշտութեան դպչելու՝ համոզած եմ իբրեւ անգին գանձ պահելու զայնս, եւ երբեմն ալ օրհնութիւն տալով կամ նիւթապէս օրհնելով գնած եմ՝ վանուցս թանգարանին մէջ դնելու համար:

Եւ սակայն մեծ մխիթարութեամբ նաեւ պատահած եմ այնպիսի գրչագրաց, որք մաքուր պահուած եւ մինչեւ ցայսօր եւս մաքուր կը պահուին, թէ՛ Ս. Եկեղեցեաց եւ թէ՛ մասնաւոր Վանորէից մէջ: Ունին բաւական հնութիւնք, գեղարուեստք, պատուական գիր եւ այլն, եւ այլն:

Պիտի շարունակեմ գրել Ծաղիկ պատուական լրագրոյն մէջ իմ տեսած ձեռագրաց մասին, եւ սակայն զբաղմանցս պատճառաւ հազիւ պիտի կարողանամ ամիսն մի անգամ գրել:

Այս մասին ուրիշ առթիւ աւելի երկար գրելու խոստանալով՝

Մնամք միշտ աղօթարար

Առաջնորդ Հայոց Կեսարիոյ

ՏՐԴԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱԼԵԱՆ

«Ծաղիկ», Ա. տարի, 1891, հմր 39, Յունիս 8, էջ 4:

2. Պատճէն հրաժարագրի Կեսարիոյ առաջնորդին (Կիսարիա, 19 Փետր. [1909 թ.])

Գերաշնորհ Տ. Յովհաննէս Ա. եպսկ. Արշարունի, պասր. տեղապահ եւ նախագահ Կեդր. պասկ. ժողովոյն ի Կ. Պոլիս

Կուսակրօնութեանս ամբողջ շրջանին, իբրեւ յետին պաշտօնեայ Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ, ութը տարի Ս. Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքը եւ շուրջ քսան երկու տարիներ անընդհատ առաջնորդական պաշտօնով Կեսարիա գտնուած եւ կարողութեանս համեմատ ծառայած եմ Ազգիս ու Եկեղեցւոյս: Եւ շարունակեցի այս պաշտօնը առանց երբեք յուսահատելու այլեւայլ խոչընդոտներէ: Պաշտօնիս եւ կոչումիս բերումով, ինչպէս առաջներն եւ մանաւանդ ազատութեան հռչակումէն ի վեր (1908 Յուլիս 11) աներկիւղ, ազատօրէն պաշտպանեցի Կեսարիոյ եւ շրջակայ գիւղերու հայ ժողովրդեանս շահերն եւ ազգային իրաւունքները: Այս պատճառաւ մոլեռանդ իմամներու եւ իրենց անձնական շահերէն եւ պաշտօններէն զրկուած զանազան թուրք տարրերու եւ մանաւանդ հին ռէժիմի մնացորդ թուրքերու խիստ հալածանքին ենթարկուեցայ, քանի որ հայ ժողովրդեան իրաւունքները կպաշտպանեմ եւ քանի որ կհակառակիմ իրենցմէ ոմանց կրկին պաշտօնավարութեանը կառավարութեան շրջանակին մէջ, որք վերջին օրերս յաջողեցան ամէն հնարքներ ի

գործ դնելով տեղական դատարանէն հրաւիրագիր (ճէլպնուսմէ) մը եւս հանել տուին ինձ դէմ. որ հաղորդուեցաւ այսօր: Փետրուար 23ին պիտի ենթարկուիմ հարցաքննութեան, մանրամասնութիւնը բնական է. որ պիտի հաղորդեմ Ձերդ Սրբազնութեան, բայց ակնյայտ կ՚երեւի թէ միշտ պիտի հալածուիմ յիշեալ հին ռէժիմի պաշտօնեաներէ եւ նոսեւ անոնց համամիտ թուրք խուժանէն, հետեւաբար արտաքին հալածանքներու արդիւնք եղող այս անօրինակ վիճակը, այն ալ այս ներկայ ազատութեան օրերուն, կը հարկադրէ զիս վերջնականապէս հրաժարիլ Առաջնորդական պաշտօնէն եւ մնացեալ կեանքս անցընել ո եւ է վանքի մը մէջ:

Կ՚խնդրեմ եւ ջերմագինս կաղաչեմ Ձերդ Սրբազնութենէն եւ Կեդր. Պաակ. Վարչութենէն, որ բարեհաճիք ընդունիլ ներկայ վերջնական հրաժարականս եւ հրամայել անմիջապէս ինձ թէ՝ որո՛ւ յանձնեմ Կեսարիոյ առաջնորդարանի, Ս. Կարապետ վանուց եւ վանքի վարժարանին 20 տարուան մանրամասն հաշիւները, քանի որ ո՛չ մէկ ազգ. ժողով (կրօն. քաղ. եւ ընդհ.) գոյութիւն չունի այսօր Կեսարիոյ մէջ. զի գործէ քաշուած են վերջերս, իրենց մասին եւս տեղի ունեցած անիրաւ եւ անտեղի գանգատներու պատճառաւ:

Խոնարհ ծստայ՝ ՏՐԴԱՏ ԵՊՍԿ. :

«Բիւզանդիոն», 1909, հմբ 3. 781, (4–17/Գ), էջ 3:

3. Տ. Պալյանի նամակը Ժառանգաւորաց վարժարանի և իր սան, ատամնաբույժ Վահան Իսպէէրյանին. Նամակ առ Պ. Վահան Իսպէէրեան ի Վիեննա, 29 Յունուար 1923, Աթէնք, Հայոց եկեղեցի.

...«Ես 1922 Սեպտեմբեր ամսոյ սկիզբները, Մաղնիսայէն Իզմիր իջած էի եղբօրս մէկ տունը բնակելու համար, կարծելով թէ Մուսթաֆա Քէմալը հոն գալու իսկ ըլլայ, Իզմիրի մէջ որեւէ դէպք չը պատահիր ա հանգիստ ժամանակ կ՚անցընենք, բայց դժբախտաբար մեր մտածումը պարապի ելաւ. Մուսթաֆայ Քէմալի եւ իւր անօրէն զօրքերու վայրագութեան միջոցաւ ամենամեծ հալածումի, կողոպուտի ենթարկուեցայ, ինչպէս նաեւ բոլոր Հայերը. Իզմիրի մէջ տառապանքը մեծ էր, ամբողջ Հայոց թաղը կրակի տուին Քէմալի զօրքերը, կարգը երբ մեր թաղին եկաւ, ինչպէս ուրիշ տուներու կ՚ընէին, երեք չորս օթմօպիլ բերին ստունիս առջեւ, եւ իմ ամբողջ գոյքերս զորս բերած էի Մաղնիսայէն, դլամներս, նամակադրոշմի մեծ հաւաքածոյս, 30 տարիներէ ի վեր աշխատած ու ժողոված ազգագրական հաւաքածոյներս ու ուսումնասիրութիւններս, պարսկական երկու թանկագին գորգերս, վեղարներս, փիլոններս, փակեղներս, եպիսկոպոսական պնակէս, խաչ եւ ամբողջ հագուստներս ու գգեստեղէններս, թղթեայ եւ մագաղաթեայ հին ձեռագիր եւ 600 հատ գրադարանիս տպագիր գիրքերս, եղբօրս 40 պարկ չամիչը եւ տանը գոյքերը եւն. այդ օթմօպիլներու մէջ լեցնելով առին տարին, եւ անմիջապէս ալ տանին մէկ ծայրէն կրակ տուին, ինչպէս ըսի՝ կ՚ընէին արիշ հայ տուներու

ալ. որուն վրայ ստիպուեցայ առանց տեսնուելու տունէն փախչիլ աղտոտ միակ վերարկուով մը. այսպէս վտղոցէ փողոց քանի մը օրեր ապրինանդին միայն հաց ուտելով թափառելէ յետոյ, վերջապէս քարափի վրայ տուն մը մտանք հանգստանալու համար. տասը տասնեւհինգ օր վերջը շատ դժուարութեամբ յունական շոգենաւ մը մտանք եւ հասանք Աթէնք, թէեւ օր մըն ալ զիս բանտարկեցին Իզմիր:

Այժմ երեք ամիսներէ ի վեր կը մնամ Աթէնք թշուառ վիճակով, իմ այս վիճակս լսուելով Երուսաղէմէն, Կ. Պոլսէն, Բարիզէն, Եգիպտոսէն օգնութեան փոքր ինչ նպաստներ ղրկուած են, որով այժմ քիչ շատ հանգստութիւն մը ունեցայ, չը պիտի մոռնամ այդ բարիքները, որ կ՚ընդունինք: Աթէնքի հայոց եկեղեցւոյն մէկ սենեակին մէջ այժմ օրերս կ՚անցնեմ խեղճ քրոջս հետ, որ կերակուրս կը պատրաստէ, որովհետեւ եղբայրս Իզմիրի մէջ կորսուեցաւ, իր մէկ փեսայով:

ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԵԱՆ

Յ. Գր. - Եթէ կարելի է, այս նամակիս ամբողջ պարունակութիւնը հաղորդէ Վիեննայի Մխիթարեան վանուց միաբան Հայր Ներսէս Ակինեանին: Նոյն» :

Հատուածական հրատ. Ն. Ակինեանի՝ «Հանդէս Ամսօրեայ», 1923, էջ 551–2:

AVETYAN KARINE

TRDAT ÉVÊQUE PALEAN (1850–1923)

Né en 1850, 30 Septembre à Césarée au village Talas. Il a commencé ses études primairi à l'ecole Vard–Patrikian. Il a travaillé à l'usine cotoniére les freres de Paliozian. Inattendu il a dccidc devenir spirituel et il est parti à Jérusalem.

1879–1887 il était un membre du congrégation de Jérusalem et il a dirige la poste de traducteur en chéfe et en même temps comme comptable et un inspecteur du imprimerie et bibliothéque.

De 1887–1910 il est chéf du diocèse de Césarée, et il a tiré une grande attention pour l'enseignements et l'édoucations et il s'est occupé par les traveaux scientifiques. Il a rassemble les materiaux archéologique et folkloriques.

Il a publié des livres: "Saint Pays et descriptions de S. Jérusalem", Catalogue des manuscrits de Césarée, Les fables, Couvents arméniens. En même temps de 1890–1921 dans les periodiques il a publié près de 200 articles. Il a eu de nombreaux traveaux exclusives.

Au mois de Septembre en 1922 après les envahition des turques de Zmurnia il est parti à Athene, ou au mois de Juillet en 1923 il est mort. Au mois de Septembre en 1928 il a été reenterrer a Jérusalem.

Il a été publier sous les pseudonymes Capete et Issa–Juvan.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կան զանազան առիթներով հրապարակված՝ Տ. Պալյանի կենսագրականներ (հրևի լավագույնը՝ Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն հայ Կեսարիոյ. հ. Ա, Գահիրէ, 1937, էջ 945–56), հատկապես՝ մահախոսականներ. սակայն մեր շարադրանքը հիմնված է նրա տպագիր գործերի մատենագիտությունը կազմելու ընթացքում թերթատած մամուլի հարուստ նյութի վրա:
2. Հոր հիշատակին և մորը նվիրված «Հայ աշուղներ» գրքի ընծայականում գրել է. «Մայրի՛կս, եթէ չը տեսար քու որդիդ Աշուղ. որուն գործը ժողովրդեան հետ է, և որ ժողովուրդին ամէն խաւերուն մէջը մտած. իր գործիքի թելերով, իր յուզիչ երգևրով ու խօսքերով. անոր սրտի թելերը կը թրթռացնէ. տեսար հոգևոր Աշուղ, Քահանայ, որ միևնոյն պաշտօնն ունի ժողովուրդի մէջ» :
3. Տրդատ վրդ. Պալեան, Սուրբ երկիր. Նկարագրութիւն Սուրբ Երուսաղէմի և սրբազան տեղեաց, հ. Ա., Երկու խօսք, Կ. Պոլիս, 1892, էջ Ե. :
4. Ա. Ալպոյաճյանը Տրդատ եպ. Պալյանի մահախոսականում («Վերջին լուր», 1923, No 2858, էջ 4) հիշողությամբ այդ ժամանակամիջոցը համարում է 1884–1908 թվականները. «Դժբաղդաբար ի վիճակի չեմ օգտուելու այն նօթերէն, որ նոյնիսկ հանգուցեալէն քաղած էի, և ուր մանրամասնօրէն նշանակուած էին իր բոլոր պաշտօնները և անոնց թուականները: Ինչ որ յիշողութեամբ կը յիշեմ անոնք է որ գիրի կ՚առնեմ» :
5. Հ. Ուղուրլեան, Կ. Աբրահամեան, Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը. Բարձրագոյն վարժարանը և Տրդատ եպս. Պալեան. Կեսարիոյ առաջնորդական աթոռը և առաջնորդներ. – Ընդարձակ տարեցոյց, Կազմնցին Մ. Չուխաճեան, Թ. Ազատեան, 1928, էջ 240:
6. Հիմնական կանոնք և ծրագիր ուսմանց Ժառանգաւորաց վարժարանի Ս. Կարապետի վանուց ի Կեսարիա, հաստատեալ 1888, Մայիս 1: Ունեցել է երեք հրատարակություն, հայտնի է երկուսը՝ Ա. Տպ. Գ. Պաղտասալեան, Կ. Պոլիս, 1894, 42 էջ: Բ. անյայտ: Գ. Իզմիր, տպ. Մ՝ Մամուրեան, 1897, 44 էջ. տե՛ս Ա. Ղազիկեան, Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի, Վենետիկ, 1909, էջ 1565:
7. Ընդարձակ տարեցոյց, էջ 245:
8. Դժվար չէ կռահել իհարկե, թե ինչ նպատակ է հետապնդել այդ որբանոցի բացումը, որտեղ հայ երեխաներին արգելվում էր համախելու հայկական եկեղեցի, վիրավորվում էին նրանց ազգային դավանական զգացումները. տե՛ս «Բիւզանդիոն», 1897, No 190, էջ 1 (Ազգ. գործերն ի Կեսարիայ), No 197, էջ 3 (Ազգային լուրեր), No 201, էջ 1–2 (Թալասի որբանոցը) :
9. Տրդ. վրդ. Պալեան, Որբանոց–կրթարան Ս. Կարապետի վանուց Կեսարիոյ. «Բիւզանդիոն», Ա. տարի, 1897, No 221, էջ 1:
10. Նույն տեղում, էջ 1:
11. Տե՛ս «Բիւզանդիոն», 1897, No 262, Ազգային լուրեր, էջ 3:
12. Տես Ռ. Զարդարեան. Ս. Կարապետի վարժարանը և Տրդատ եպիսկ. Պալեան. – «Արեւելեան մամուլ», 1904, էջ 586–9, 610–15: Թ. եպիսկ. Գուշակեան. Ճամբու վերյիշումներ. Մեբաստիայէն Էսկիշէհիր (1913 6–12), «Բիւզանդիոն», 1914, No 5272, էջ 1, No 5274, էջ 1, No 5280, էջ 1, No 5286, էջ 1,

No 5304, էջ 1, No 5313, էջ 1: Ա. Ալպոյաճեան. Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրէ, հ. Ա, 1937, 945–56: Վ. Թէքէեան. Կեսարիա երթուղարձի և բնակութեան օրագիր մը (1913 Սեպտեմբեր – 1914 Յունուար), Ս. Կարապետի վանքը և վարժարանը. «Ժողովուրդի ձայնը», 1921, No 811, էջ 4, No 813–16, 818–22 և այլն:

13. «Բիւզանդիոն», 1900, հմբ 1004, էջ 3 (Ազգային քրոնիկ). տե՛ս նաև նույն համարի խմբագրականը, որտեղ Պալյան հոգևոր առաջնորդի իրական նկարագիրը տալուց հետո կա «...Այս անգամ ալ զանազան վանքերու մատակարարութիւնը միացուցեր է և իւրաքանչիւր վանքի մէջ տեղւոյն միջոցներուն համեմատ դպրոցներ բացեր է, զորս իրարու մէջ աստիճանատրեր և իրարու կապակցեր է: Ահա մարդ մը, որ խելք ալ ունի, ձեռներեցութիւն ալ ունի և ճշմարտապէս կ'հասկնայ Առաջնորդի մը պաշտօնին թէ՛ վարչական կամ մատակարարական և թէ բարոյական պահանջումները: Կեսարիոյ դպրոցներն երբեք աւելի աղէկ վիճակ մը ունեցած չէին և երբեք տոհմային լեզուն ու դպրութիւններն աւելի յարգ վայելած չէին հոն, հակառակ ժամանակին առնտրական և երկրագործական աննպաստ հանգամանքներուն և տիրող դրամական անձկութեան» (Ի՞նչ կընեն մեր առաջնորդներ, էջ 1) :

14. «Բիւզանդիոն», 1903, No 2103, էջ 1:

15. «Արեւելեան մամուլ», 1904, էջ 288 (Լրաքաղ) :

16. Տե՛ս «Բիւզանդիոն», 1912, No 4682, էջ 2՝ «Տրդատ եպիսկոպոսի Կեսարիոյ առաջնորդութեան օրով հաստատուած և զաւառի կրթական բարձրագոյն հաստատութեանց վիճակին հասած Ս. Կարապետի վարժարանը հաւանաբար օր մը փակուելու վիճակին պիտի հասնի ա՛յն կուսակցական գործիչներուն ձեռքով, որոնք Տրդատ եպիսկոպոսի հրաժարման առիթ տուին և Կեսարիոյ ազգային և կրթական գործերն իրենց ձեռքին մէջ առին: Ս. Կարապետի կրթական հաստատութիւնն, որ այնքան կարող աշակերտներ տուաւ, այսօր պարտքի մէջ կը տապլտկի» :

17. Տե՛ս «Բիւզանդիոն», 1914, No. 5304, էջ1:

18. Տե՛ս Տ. վրդ. Պալեան. Արձագանգ Կեսարիայէն. – «Բիւզանդիոն», 1897, No 63, էջ 1, No 72, էջ 3, No 80, էջ 3, և լն. նաև՝ «Բիւզանդիոն», 1898, No 454, էջ 2, Թիւ 459, էջ 2 (Ազգային քրոնիկ) : Իսկ նույն թերթի Հունվարի 20ի խմբագրականը՝ «Առաջնորդներ» վերնագրով «իր պարզութեան մէջ շատ գեղեցիկ և անսպասելի» է գտնում Պալյանի պահվածքը, «որովհետև հոն հաւաքուելիք ո՛ և է նպաստ հազիւ կրնար բաւել տեղւոյն աղքատներուն», կեսարացիների համար ուղղակի բարեբախտություն է համարում այդպիսի հոգատար առաջնորդ ունենալը և ավարտում է՝ «Այսպիսի եկեղեցականներու շա՛տ պէտք ունին Ազգն ու Եկեղեցին» (թիւ 65, էջ 1) :

19. Տես՝ [Բ. Քէչեան] Խմբագրականք՝ Ոչ հայախօս վայրեր. - «Բիւզանդիոն», 1897, No 86, էջ 1:

20. Ս. Կարապետի առաջին շրջանավարտներից Ներսես Զ. Տ. Ստեփանյանի կարծիքով՝ «Կեսարիոյ առաջնորդական աթոռն առաջին անգամն է, որ կը տեսնէ այսպիսի գործունեայ և բանիբուն առաջնորդ մը, կը յայտնենք մեր խորին երախտագիտութիւնն անարժանաբար և կը խնդրենք, որ ընդունի ազնուաբար». տե՛ս «Արեւելեան մամուլ, 1897, էջ 310: Առաջնորդի ջանքերի ակնհայտ արդյունքն է եղել նաև այն, որ «...տաճկախօս քաղաք մը» Կի-

սարիան «այսօր կը մրցի հայախօս զարգացած կեդրոններուն հետ...» (Դ. Խաչկոնց. Բիւրակն, 1899. էջ 322–3) :

21. «...Աղջկանց վարժարանէն զատ. թէև մանկապարտէզ ալ ունէինք. բայց յատուկ շէնք մը չունէինք, տարիներէ ի վեր վարձքով կ'բռնուէր տեղ մը... Վերջին օրերս Առաջնորդ Սրբազան Հօր ստիպման ու յորդորանաց վրայ երեք եկեղեցեաց թաղական խորհուրդներն միանալով. մանկապարտէզի համար յատուկ և շատ յարմար շէնք մը գնեցին..., ուր այժմ փոխադրուեցան հարիւրէն աւելի փոքրիկներ...». տե՛ս Զաւէն. Գասսոյին քրոնիկ՝ Կեսարիա. - «Բիւզանդիոն», 1905, No 2585. էջ 1:

22. Հնչակյան Ժիրայրի՝ ժամանակին մեծ աղմուկ հանած մահապատիժն ու թաղումը. Պալյանին մեղադրում էին թաղման ծես չկատարելու համար. մինչդեռ Ժիրայրը մահապատժից առաջ ինքն էր մերժել առաջնորդի ուղարկած քահանայի ծառայությունները. ասելով. որ ինքը բողոքական է:

23. Մեկնոն Ասատուր. – «Վերջին լուր», 1923, No 2847, էջ 4:

24. Տե՛ս Տրդատ եպիսկոպոսի հրաժարականը՝ Բիւզանդիոն, 1909, No 3781 (4–17/Գ), էջ 3:

25. Տե՛ս Ա. Ֆրէնկեան. Կեսարիոյ առաջնորդը. – «Բիւզանդիոն», 1910. No 4209, էջ 1. ենթադրում է, որ զանգատվողների մեջ կարող են լինել թերևս - նաև ոմանք իր ազատածներից:

26. Այդ բոլոր իրադարձությունների մեջ եղել են շատ մութ ու կասկածելի կետեր՝ զավառական ժողովի ապօրինի ընտրությունները. Առաջնորդին դատական ծանուցագրեր ուղարկելը, Պատրիարքարանը շրջանցելով և առանց վերջինիս հրահանգի առաջնորդական ընտրություններ կազմակերպելը և այլն: Սակայն պարզ է, որ այդ ամենը արվել է Պալյանին հեռացնելու նպատակով:

27. Մեկնոն Ասատուր, Կեսարիոյ առաջնորդը. - «Բիւզանդիոն», 1910. No 4. 071, էջ 1:

28. Նույն, տե՛ս «Բիւզանդիոն», 1910, No 4. 072, էջ 1:

29. «...Վարչութիւնը փոխանակ ամսականատր նոր պատուիրակ մը ղրկելու, այս պաշտօնն յանձնեց Տրդատ Սրբազանի, որ Երուսաղէմի վարչական և մատակարարական գործերուն, ինչպէս նաև Ղևոնդ վարդապետի մեքենայութիւններուն մօտէն տեղեակ ըլլալով, ղեռնդեան խումբին տրուսած վերջին հարուածն է այս». տե՛ս «Բիւզանդիոն», 1910, No 4095. էջ 2:

30. Տե՛ս «Բիւզանդիոն», 1910, No 4. 096, էջ 2:

31. Մ. Մ. Ռ. Խմբագրական. - «Արևելեան մամուլ», 1909, էջ 7: Իսկ հետո համարում է պատրիարքական աթոռի ամենահարմար թեկնածու՝ «Այս միջոցէն տարբեր ելք մը չենք տեսներ վանքն փրկելու և զայն հիմէն մաքրելու համար» :

32. Տե՛ս «Բիւզանդիոն». - 1910, No 4181, էջ 1, No 4201, էջ 1, No 4232, էջ 2:

33. Մեկնոն Ասատուր, Կեսարիոյ գործեր. - «Բիւզանդիոն», 1910, No 4. 181, էջ 1, No 4180, էջ 2, No 4204, էջ 2, 4205, էջ 2 (Հայ ազգային լուրեր) :

34. Տե՛ս Տ. Պալյանի նամակը Վահան Իսպէէրյանին. – «Հանդէս ամսօրեայ», 1923, էջ 551:

35. Յ. Դարբինյան՝ «Ծաղիկ» հանդեսում հրապարակել է ձեռագրերի նկարագրություններ (Գասապա, Ս. Աստվածածին եկեղեցի):

36. Յ. Տարագիր, Հանգիստ Տ. Տրդատ եպիսկ. Պալեանի. – «Արև», Կահիրե, 1923, No 176, էջ 1:
37. Այսուհանդերձ, երկու գրքույկ տպագրվել է որպես «Հրատարակութիւն Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց Ժառանգաւորաց վարժարանի»՝ 1. Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա, հ. Ա, Կեսարիոյ վիճակ, Կոստանդնուպոլիս, 1892: 2. Նշանագիրք Հայոց, Վիեննա, 1898: Ըստ անուղղակի մի տեղեկության («Հանդէս ամսօրեայ», 1898, էջ 121)՝ եղել է ևս մեկը. «Հիմնական կանոնք և ծրագիր ուսման Ժառանգաւորաց վարժարանի...» գրքի 1897 թ. երրորդ հրատարակությունը, որ Հայաստանի գրադարաններում չկա, նկարագրությունը տե՛ս Ա. Ղազիկեան, Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի, Վենետիկ, 1909, էջ 1565:
38. Մամուլում հրապարակված շրջաբերականում գրում է. «... ունիմ մի նուիրական նպատակ, որով պարտք կզգամ հրաւիրել ամէն դասակարգի ազգայնոց քաղցր ակնարկը վանուցս նորակազմ թանգարանին վերայ, խնդրելով որ ամէն աստիճանի նշանաւոր անձինք ազգին, գրագէտք և հեղինակք իրենց հեղինակութեանց նուէրներով, լրագրապետք, գրավաճառք և տպագրապետք տպագրեալ ամէն տեսակ հին ու նոր, հայերէն և այլ լեզու գրեանց հատորներով և կարող ազգայինք ալ գրականութեան և թանգարանի պատշաճ ընծաներով, պարբերական հանդէս և լրագիրներով, ազգասիրաբար օժտեն նոր թանգարանն Սրբոյն Կարապետի վանուցս...». տե՛ս «Արեւելեան մամուլ», 1890, էջ 378:
39. Տ. Վրդ. Պալեան, Չքատր տղոց կրթարան Ս. Կարապետի վանուց Կեսարիոյ. Կեսարիոյ առաջնորդին նամակն առ «Բիւզանդիոն». - «Բիւզանդիոն», 1897, No 254, էջ 1–2:
40. Տ. Վրդ. Պալեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Ա., Կեսարիոյ վիճակ, Տետր Ա., Ցուցակ հայերէն ձեռագրաց Սուրբ Սարգսի վանուց ի Կեսարիա, Կ. Պոլիս, 1892, էջ 7 (Նախաբան) :
41. Ձեռագրի նկարագրության առաջին փորձը տպագրել է Կ. Պոլսի «Ծաղիկ» հանդեսում՝ 1891 թ. այնուհետև՝ «Հանդէս Ամսօրեայ», «Լոյս», «Բիւզանդիոն», Զմյոտնիայի՝ «Արեւելեան Մամուլ», «Դափնի» հանդեսներում:
42. Ս. Կարապետ վանքի հավաքածուի նկարագրության մասին տեղյակ է եղել Ն. Ակինյանը, որ դեռևս 1908 թվականից խնդրել է, որպեսզի մաս մաս հրատարակելու համար Պալյանն ուղարկի «Հանդէս Ամսօրեայ» ին, մանավանդ որ՝ ինչպես ինքն է խոստովանել, «...առանձինն ծախք ընելով առանձին հատորով ի լոյս ընծայելու նիւթական կարողութիւնը չունիմ» : 1921 թ. Դեկտեմբերին միայն սկսել է ուղարկել և Ակինյանին գրել է. «Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց 1888 թուականին նոր հաստատուած մատենադարանին մէջ, հետզհետէ հաւաքած էի 160էն աւելի հայերէն ձեռագիրներ, որոնց օրը օրին ցուցակագրութիւններն ալ կ՚ընէի, ինչպէս ըրած եմ նաև միւս վանորէից և վիճակին ամէն եկեղեցեաց ու անհատներու մօտ գտնուած ձեռագիրներն, որոնք 500 հատէ աւելի են: Այս ամէն աշխատութիւններուս ցուցակն այժմ քովս են, զորս հետզհետէ կ՚ուզեմ հրատարակել Հանդէս Ամսօրեայի մէջ: ...Նախ ուզեցի Ս. Կարապետի վանուց ձեռագիրներէն սկսիլ». տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1923, էջ 554–5: Նկարագրությունը (ընդամենը 48 ձեռագրի), հրատարակվել է «Հանդէս ամսօրեայ» ի 1959–60 թվականնե-

րի համարներում, իսկ հետո առանձին՝ «Ցուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի և Ս. Դանիէլի ի Կեսարիա. Կազմեց Տրդատ եպ. Պալեան». Վիեննա, 1963:

43. Առաջին ամբողջական նկարագրությունը տե՛ս «Ծաղիկ», Բ. տարի, 1892, • 37, Յունիս 27, էջ 434–6: Գրեթե միաժամանակ Հ. Բառնաբաս Պիլեզիկճյանը թարգմանել է Ժ. Սարչիզովսկու՝ Էջմիածնի Ավետարանի մանրանկարչությանը նվիրված գերմաներեն ուսումնասիրության (Վիեննա, 1891) ընդարձակ հատվածներ՝ տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1891-1892:

44. Հրատարակել է երկու հոդված՝ «Հայերէն ձեռագիր աւետաբանք Թ–ԺԵ. դարերու. – «Բիւզանդիոն», 1908, No 3551, էջ 4, No 3557, էջ 4:

45. Հայ մամուլը Կ. Պոլսոյ մէջ (1567–1850). տե՛ս «Բիւզանդիոն», 1905, No 2560, էջ 1:

46. Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1922, էջ 508, «Արեւելեան մամուլ», 1905, էջ 936–7, «Բիւրակն», 1900, No 1, էջ 3–5:

47. Տ. վրդ. Պալեան, Հայ տպագրութեան ամենահին երախայրիք մասն. - «Հանդէս ամսօրեայ», 1894, էջ 357–61:

48. Տ. վրդ. Պալեան, Յարութիւն քահանայ Շմաւոնեանի վրայ նորագոյն տեղեկութիւններ, Տէր Յարութիւն Շմաւոնեան քահանայի վրայ նորագոյն տեղեկութիւն մը ալ. - «Հանդէս ամսօրեայ», 1895, էջ 116–7, 1896, էջ 310–1:

49. Տե՛ս Ցուցակ հայերէն հին տպագրութեանց 1513–1850. - «Բանասէր», 1903, էջ 203–7, 1904, էջ 47–51, 1905, էջ 59–62, 106–10, 145–50, 280–6, 325–7:

50. Տ. եպս. Պալլանի նամակը Ն. Ակինյանին՝ 1908 թ. 24 Նոյեմբ. տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1923, էջ 556:

51. «Փորձ» (Թիֆլիս), 1881, No 4, էջ 1–32:

52. Տ. եպս. Պալեան, Ազգային նիւթեր. Ցուցակ հայերէն հին տպագրութեանց. - «Բիւզանդիոն», 1901, No 1372, էջ 1: Այդ առիթով «Բիւրակն» ի խմբագիր Դ. Սարգսյանը գրել է. «...քանքարաթաքոյց մը չէ Պալեան եպիսկոպոսը և փափաքող է, որ իր, թէ ուրիշներուն ըրած հաւաքումները, բանասիրական փշրանքները մութի մէջ չմնան, այս կամ այն կերպով լոյս տեսնեն, օր մը առաջ ուրիշներն ալ օգտուին իր տքնութեանց ու խուզարկութեանց արդիւնքներէն՝ հոգ չէ թէ հրատարակողն ինք ըլլայ կամ...». տե՛ս Գրական գործակցութիւն. - Մխիթարեաններուն «Բիւզանդիոն», 1901, No 1378, էջ 1:

53. Մելքոն Ասատուր, Անհետացող դէմքեր՝ Տրդատ եպ. Պալեան, «Վերջին լուր», Կ. Պոլիս 1923, No 2849, էջ 4:

54. Ցավոք, մյուս հատորները լույս չեն տեսել, իսկ այս միակ հատորի մի օրինակ իսկ Հայաստանի գրադարաններում գոյություն չունի, գրքի պատճենը շնորհակալությամբ ստացել ենք պոլսաբնակ Վաղարշակ Սերոբյանից: «Բիւզանդիոն» ում տպված և այս հատորի մեջ չընդգրկված նկարագրությունների մեկտեղումը և գրքային հրատարակությունը գիտական մեծ կարևորություն ունի:

55. «Բիւզանդիոն» օրաթերթի իր հրապարակումներն արել է երբեմն մեծ ընդհատումներով. Պալլանը սա բացատրել է նրանով, որ գրագողության դեպքեր է նկատել և առանց որևէ բողոքի, ժամանակ առ ժամանակ դադարեցրել է իր հրապարակումները, այդպիսով պատժելով «աճպարարին». տե՛ս «Արեւելեան մամուլ», 1904, էջ 588:

56. Հայ վանորայք, Մասն Ա, Իզմիր, 1914, Երկու խօսք, էջ Է. :
57. Թերթային տարբերակում հիշատակարանային վկայությունները «խմբագրվել» են, հարմարեցվելով թուրքական պետության «շահերին»:
58. Հայ աշուղներ, ժողովրդական հայ երգիչներ և տաղասացք. հ. Ա., 1911, հ. Բ., 1912: Աշխատության վերջին հատորի վերջին մասում պետք է որ լիներ Պալյանի ձեռքով գրված ինքնակենսագրությունը. «...մանրամասն և մանաւանդ անաչառապէս, գրի առած պատրաստած եմ ես ինքս...» :
59. Ժողովրդական առածներ և զանազան ասացուածք. պր. Ա., Բ., Զմիւռնիա, 1912:
60. Տե՛ս Հայ աշուղներ. – «Ծաղիկ», Գ. տարի, 1893, No 8, Մարտի 1, էջ 55:
61. Յ. Մրմզրեան. Ովսաննա յԵրուսաղէմ. Ս. Յակոբեանց աթոռին պատրիարքն ու միաբանութիւնը. – «Դափնի» (Զմիւռնիա), 1921, էջ 115–16:
62. Երևում է պարբերականների վերջին էջերում զետեղված «Նամակատուփ», «Թղթակցութիւն» անունով փոքրիկ բաժիններում տպագրված պատասխաններից:
63. Տ. եպս. Պալեան. Կեսարիոյ լուրեր. – «Բիւզանդիոն», 1903, No 2107, էջ 1:
64. Տե՛ս «Ծաղիկ», 1905, էջ 519: